

իսկ Հոլանդա 2, Սպանիա 5: Անգղիա՝
ընական է 49, Գաղղիա՝ 26, Իտալիա՝
20, Ռուսաստան 18, իսկ եթէ փոքր
եւ մեծ զրահապատ պատերազմական
նաւերը նկատողութեան անունը, Գեր-
մանիա 4^{րդ} տեղը կը զբաւէ, վասն զի
ունի 36 նաւ, Անգղիա՝ 95, Գաղղիա 64
եւ Ռուսաստան 52: Մտադրութեան ար-
ժանի է որ երբեակ նիգակակցութեան
նաւերն եւ երկեակ նիգակակցութեան
նաւերը համահաւասար են թուով, այս-
ինքն երկուքն ալ ունին միայն 44 զրա-
հանաւ:

Այս համամատուցինը գերազան-
ցելու համար Վիլհելմ Բ. կ'առաջարկէ
15 նաւ նոր — մեծ ու փոքր (մեծը՝ 11.000
տակառաշափ, իսկ փոքրը՝ 3.490 տ. տա-
րողութեամբ) զրահանաւեր շինել, ըայց
— այս առաջարկութիւնը մերժուեցաւ առ
այժմ: Կայսրն օրինակ կը բերէր — Ճա-
պոնը, որ 1906ին պիտի ունենայ 17 նաւ
մեծ ու փոքր նոյնայ նաւ (մեծերը 15.140
տակառաշափ, իսկ փոքրները՝ 2.700 տ.
տարողութեամբ). իսկ Գաղղիա 1901ին
պիտի ունենայ 30 նոր զրահանաւ (մեծերը՝
12.000 տակառաշափ, իսկ փոքրները՝
2345 տ. տարողութեամբ). ըայց շատ
իրաւամբ կրնայ առաջարկուիլ, թէ ի գուր
են այս ծախքերը, քանի որ Գաղղիա եւ
Անգղիա մի եւ նոյն միջոցին կրնան դեռ
50 նաւաւելի շինել. որով դարձեալ կ'ոչըն-
չանայ Կայսեր նպատակը: Կը զարմա-
նանք՝ “Պոմերանիացի զինուորի մը սրուն-
քին չափ արժէք չունեցող, արեւելքը
առիթ կու տայ արագին պատրաստու-
թիւններ տեսնելու: Արեւելք եւ — պոմե-
րանիացի զինուորին համամատուցեան
հաւատացողին՝ կը մտադնեն Sancta sim-
plicitas!

Առադրիա. Երեսփոխանաց ժողովին
ընտրութիւններն ալ վերջացան, հակա-
հրէականը կրնան ամենայն հանդարտու-
թեամբ պարծիլ, որ հոս ալ ցոյց տուին
իրենց քաջութիւնը. Ե. շրջանին մէջ 18
երեսփոխան պիտի ընտրուէին, 18ն ալ
ընտրուեցան — հակահրէական: Միւս
շրջաններու մէջ ալ յաղթութենէ ի յաղ-
թութիւն դիմեցին: Վաղը կը բացուի ժո-
ղովը. որոշ գաղափար կ'ունենանք կու-
սակցութեանց համամատուցեան վրայ:

— Նոր ժողովքին կը մտադնեն սակաւիկ
մի ջեյմս ուշադրութիւն արեւեան ինտրոյն,
վասն զի նախորդ “ազատամիտ, կոչուած
հրեայ եւ հրէամիտ երեսփոխանաց ժո-
ղովին ծրագրէն դուրս մնացած էր այս
ինտրոյը՝ իրրեւ վնասակար հրէական վա-
ժառաշարութեան . . . :

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ — Համառոտ պատմութիւն Հայոց ըստ

Պրոֆ. Է. Դելեքի. 97:

ՀՆԱԳՐԱԿԱՆ — Ամսաթի մը հայ հնագրութեան
վրայ. 106:

ԳՐԱԿԱՆ — Պատմութիւն հայ լրագրութեան 1860էն
մինչեւ մեր օրերը. 110:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Եղիսաբեթուպոլսոյ Հայոց ընտա-
նեկան կենաց վերաբերեալ կարգադրութիւն-
ներ 115:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Փաւստոս Բիւզանդացի եւ իւր
պատմութեան խարդախողը. 118:

ԱՅԼԵՆԻԱՅԻՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ — 1. Մարկին հայ մասնա-
գրութեան մէջ: — 2. Հայ ազգագրական թերթ
մը: — 3. Գ. Ելուսէրեղի մէջ նոր գործը. 123:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԻ ԺԱՂԻՇՓՈՒՆՋ — 1. Հայ
արուեստագէտներ յետադա: — 2. Գրական
նոր երեւոյթ մը Գ. Պոլսոյ լրագրութեան մէջ:
— 3. Մահեսի — ժողովրդական ստուգաբանու-
թիւն: — 4. Գրականութեան ծառայողներու
տաղանթը: — 5. Հիւանդանոց: — 6. “Ժողկա-
քաղը, եւ հայերէն — Fremd-und-platz: —
7. Գ. Պոլսոյ հայերէն ծնողաբաց ցուցակը: —
8. Նուիրատուութիւն: — 9. Պրոֆեսոր Անտոնե-
վիչի կարծիքը Նիսաստանի Հայերի գեղարուեստ-
ների մասին: — 10. Դ Ապոստ Մ. Արմը. 124:

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 127:

ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱՆԱՅԻՆ ՆՄԱՐԱԳԻՐ

Դ. ԱՍՓԱՏԵԼ Կ. ՊԱՐՈՆՅ

Վ Ի Ե Ն Ե Ն, Բ Ի Թ Բ Ո Ւ Ե Ն, Տ Գ Ր Ե Ր Ն .